Ժաննա Հարությունյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 4-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ պ. գ. թ., դոց. Վ. Պետրոսյան

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԵՂԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղավորության հետ կապված բազմաթիվ արխիվային հիմքերն էլ առիթ հանդիսացան անդրադառնալ այս թեմային: Եվ նպատակն էլ՝ անքակտելի փաստերի արծարծումն է, որոնք ինքնին ապացուցում են Գերմանիայի մեղավորությունը եղեռնագործության մեջ:

Մերձավոր Արևելքը 19-րդ դարի վերջերին կռվախնձոր էր Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Գերմանիայի նպատակն էր ընդլայնել գերմանական ազդեցությունը դեպի Արևելք, ուստի Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ ձևավորվել և գործում էր մի ուղղություն, որը դիվանագիտության պատմության մեջ հայտնի է Drang nach Osten (արշավանք դեպի Արևելք) անունով[1]: Այդ տարածաշրջանում հակասությունների հիմնական օբյեկտը Օսմանյան կայսրությունն էր: Այդ երկիրը հայտնվել էր ներքին և արտաքին քաղաքական ճգնաժամի մեջ և մեծ տերություններից յուրաքանչյուրն իրեն համարում էր թուրքական ժառանգության հավակնորդ[2]:

Գերմանիայի մեղավորությունը փաստող բազմաթիվ հիմքերից մեկն էր գերմանա-թուրքական մերձեցմանը վերաբերող Վիլհելմ 2-րդ կայսեր հայտարարությունն. «Թող Նորին Մեծություն սուլթանը և 300 միլիոն մուսուլմանները համոզված լինեն, որ ի դեմս գերմանական կայզերի, նրանք ձեռք են բերում հավերժական բարեկամի»[3]: Սա էլ հիմքերից մեկն է կարծելու, որ Գերմանիան երբեք չէր դավաճանի իր «հավերժական բարեկամին» անգամ եղեռնագործության ժամանակ:

Ահա և ստացվեց պատասխանը Աբդուլ Համիդ 2-րդի կողմից. «Սուլթան Աբդուլ Համիդ խան 2-րդի Նորին մեծության նրա հավատարիմ բարեկամը, Կայզերական ընտանիքի վեհաշուք պայծառափայլ զարդարանքը, երջանկության բարձունքում կանգնած

[1] **Pim den Boer, Peter Bugge, Ole WØver, Kevin Wilson, W. J. van der Dussen, Ole Waever,** European Association of Distance Teaching Universities, The history of the idea of Europe, 1995, p.93, ISBN 0415124158, 9780415124157:
[2] The political speeches of Prince Bismarck. Historical-Critical Edition by Horst Kohl concerned. 14 volumes. Cotta, Stuttgart, 1892-1905.
[3] Տե՛ս **Բաում Վ.**, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, թարգմ.՝ Դ. Սահակյան, Է. Մակարյան, Երևան, 2010:

նորին մեծությունն Կայզեր Վիլհելմ 2-րդը, որի նմանը չկայ գերմանական կայզերների ու տիրակալների մեջ, ի պատիվ օսմանների փատիշահի իր այցով զարդարեց Կոստանդնուպոլիսը, և որպես այցելության հիշատակ կառուցեց այս ջրհորը, և նրա զուլալ ջրի նման բարձրացրեց երկու ինքնակալների բարեկամությունը՝ որպես անբասիրության օրինակ: Թող այս ջրհորը հանդիսանայ յաւէրժական բարեկամության յուշարձան»[1]:

Թուրքիայի կողմից հակահայկական քաղաքականությունն ու գործողությունները ելնում էին պանթուրքիզմի գաղափարախոսությունից, ուղղված էին նաև Ռուսաստանի դեմ և աջակցություն էին գտնում եվրոպական տերությունների, մասնավորապես Գերմանիայի կողմից: Այդ կապակցությամբ 19-րդ դարի վերջերին գերմանական ու անգլիական դիվանագիտության մեջ որոշակի ուղղություն կար: «Հայաստանն առանց հայերի» նշանաբանով[2], որը քողարկելու նպատակով այդ նույն գիծը վերագրվում էր Ռուսաստանին: Այն, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին Գերմանիան ակտիվ պաշտպանում էր Օսմանյան կայսրության հայկական բնակչության նվազեցման ու բնաջնջման թուրքական քաղաքականությունը, փաստում է Գերմանիայի արտաքին գործերի նախարար Արտուր Ցիմմերմանի հետևյալ հայ քրիստոնեան ու եվրոպացին պետք է հանգիստ դիտարկի ու սուլթանի հասցեին բարի խոսքեր ասի՞: «Սուլթանը պետք է գահընկեց արուի»[3]:

Նման գրություններն ու արտահայտությունները մնացել են միայն թղթի վրա և գործնական ոչ մի բան չի ծեռնարկվել: Ճշմարտությունն այն է, որ խոսքով դատապարտվում էին հայկական կոտորածները, իսկ իրականում, ուղղակի կամ ոչ ուղղակի պաշտպանություն էին գտնում կայզերական կառավարողների կողմից:

Միանգամայն ճշմարիտ է հայկական հարցի գիտակ Պ. Ռոհրբախը, որը նշել է. «Թուրքիայի նկատմամբ Գերմանիայի միայն ընդգծված բարեկամական վերաբերմունքը հնարավոր դարձրեց սարսափելի չափերի կոտորածները»[4]:

Սակայն գերմանական իրականության մեջ էլ կային անձիք, ովքեր դատապարտում էին թուրքական կառավարողների հանցավոր հակահայկական գործողությունները: Ինչպիսի՞ն է մեծ մարդասեր գերմանացի Եոհաննես Լեփսիուսը: «1895 թվականի աշնանը

[1] Նույն տեղում:
[2] **Օնանյան Վ.**, Անգլիական խաղեր, Ապրիլի 9, 2010:
[3] Տե՛ս հղում 4:
[4] **Anker J.**: Rohrbach, Paul Carl Albert. In: Neue Deutsche Biographie (NDB). Band 22, Duncker & Humblot, Berlin, 2005, S. 5 f

Գերմանիայի Ֆրիզդորֆ բնակավայրում տեղի է ունենում միսիոներների հավաք և ստեղծվում է «Գերմանա-Արևելյան առաքելությունը»[1]: Այն ժամանակ լուր է հասնում Ֆրիզդորֆ, որ Արևմտյան Հայաստանում, Կոստանդնուպոլսում և Թուրքիայի հայաբնակ վայրերում սկսվել են հայերի զանգվածային կոտորածները: 1896 թ. աշնանը «Գերմանա-Արևելյան առաքելության» ղեկավարության հանձնարարությամբ Եռ. Լեփսիուսն ուղևորվում է Օսմանյան կայսրություն, այնտեղ մնում է 8 շաբաթ, հանգամանորեն ուսումնասիրում է արևմտահայության ողբերգական վիճակը և վերադառնալով Գերմանիա հասարակության լայն շրջաններին իրազեկ է դարձնում այդ մասին: Օսմանյան կայսրություն կատարած իր ուղևորության և արևմտահայության ողբերգական վիճակին ծանոթանալու արդյունքն ամփոփվեց նրա «Հայաստանը և Եվրոպան» աշխատության մեջ, որը լույս տեսավ 1896 թ.: Այդ աշխատությամբ ամբողջացվեց «Ճշմարտությունը Հայաստանի մասին» հոդվածաշարը, որը հրապարակվել էր գերմանական մամուլում: «Հայաստանը և Եվրոպան» աշխատությունը հավաստի աղբյուրներով ցույց է տալիս սուլթանական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունն ու հանցավոր գործողությունները XIX դարի վերջին տասնամյակում: Աշխատությունում հայերի ցեղասպանության վերաբերյալ բերված պաշտոնական փաստաթղթերն ու հավաստի տվյալները մեծ հետաքրքրություն առաջացրին ամբողջ Եվրոպայում: Պատահական չէ, որ աշխատությունը թարգմանվեց անգլերեն, ֆրանսերեն և ունեցավ մի քանի հրատարակություն: Եռ. Լեփսիուսը պաշտոնական փաստաթղթերի հիման վրա ցույց է տվել հայերի կոտորածներն ինչպես Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներում, այնպես էլ հայաբնակ Տրապիզոնի, Մամուրեթ-ուլ-Ազիզի, Հալեպի, Ադանայի և Անկարայի նահանգներում: Գրքի առաջին գլուխը վերնագրված է. «Ճշմարտությունը Հայաստանի մասին»[2], որտեղ բացահայտված են սուլթանական հայտարարությունը. «Ըստ էության, հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցուած Հայաստանը վնասաբեր է նրա շահերին»[3]: Պատմությունը ցույց տվեց, որ արևմտյան մեծ տերությունների բեռլինյան «կոնցերտը», որի դիրիժորը կանցլեր Օ. Բիսմարկն էր, հայկական հարցում լիովին պաշտպանեց սուլթանական Թուրքիայի հայատյաց քաղաքականությունն ու գործողությունները:

Այնուամենայնիվ, ոճրագործությունը տեղի ունեցավ: Հայկական հարցի հայտնի մասնագետ գերմանացի Պաուլ Ռոհրբախը գրել է. «Իրականում այն ինչ տեղի ունեցավ Հայաստանում, իր մասունքներով այնքան ցնցող է, որ ո՛չ մի գրիչ, ո՛չ մի երևակայություն ի վիճակի չէ պատկերելու անհամար սարսափելի տառապանքները, որ կրել է այդ ժողովուրդը»[1]: Նահատակված հայերի թիվն անցավ 300 հազարից, իսկ մի շարք տվյալներով հասավ մինչև կես միլիոնի: Դա հայերի առաջին զանգվածային ցեղասպանությունն էր. Որպես Օսմանյան կայսրության դաշնակից, պաշտոնական Գերմանիան արդարացնում կամ գովերգում էր Օսմանյան կայսրության բարբարոսությունները. «Ճիշդ եռ անում կտրիճ թուրք, դու միակ ջենտլմենն ես Արևելքում»[2]: Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումը խիստ տարբեր էր: Դրա մասին է փաստում Վիլհելմ 2-րդի՝ ի պատասխան Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Ֆոն Զաուրմայի զեկուցագրի, նշումները. «Եւ այս բոլորը կառավարողների ծրագրերն ու գործողություններն արևմտահայության առաջին զանգվածային ցեղասպանության իրականացման գործում: Բնական է, որ Եռ. Լեփսիուսի գրավոր ու բանավոր խոսքը մեծ դեր կատարեց արևմտահայության ծանր վիճակի մասին ճշմարիտ հասարակական կարծիք ստեղծելու համար[3]: 19-րդ դարի 90-ական թթ. հայերի ցեղասպանության ժամանակ և դրանից հետո. Եռ. Լեփսիուսը հսկայական գործնական աշխատանք կատարեց արևմտահայության օգնության գործում: Ամենից առաջ Եռ. Լեփսիուսը ձեռնամուխ եղավ սպանված հայերի այրիների ու որբերի օգնությանը: Հենց այդ նպատակով էլ Եռ. Լեփսիուսը Ֆրիզդորֆի իր գորգի ֆաբրիկան տեղափոխում է Կիլիկիա: Ֆաբրիկան գործում է Ուրֆա հայկական քաղաքում, ուր աշխատում են հայ այրիներն ու որբերը: Բացի դրանից՝ նրա ջանքերով հայ որբերի համար հայաբնակ կենտրոններում որբանոցներ, բուժարաններ, արհեստանոցներ ու արհեստագործական դպրոցներ հիմնվեցին, իսկ Գերմանիայում հայ որբերի ու ուսանողների համար հովանավորողներ հավաքագրվեցին: Իր գործունեությամբ նա համաշխարհային առաջադեմ հասարա-կության խիղճն էր արթնացնում ընդդեմ սուլթանական Թուրքիայի կառավարողների: Բեռլինում

[1] **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսուսի վերջին պայքարն ու առաքելությունները, Երևան, 2002, էջ 542:
[2] Տե՛ս **Լեփսիուս Եռ.**, Ճշմարտությունը Հայաստանի մասին (Die Wahrheit Ѣber Armenien), «Կայզերական տեղեկագիր», 2001:
[3] Տե՛ս **Ստեփանյան Ս.**, Հիտլերի հակամարդկային վերաբերմունքը մեծ ողբերգության նկատմամբ, Երևան, 2001.

[1] **Anker J.**: Rohrbach, Paul Carl Albert. In: Neue Deutsche Biographie (NDB). Band 22, Duncker & Humblot, Berlin, 2005, S. 5 f
[2] Տե՛ս **Հերլեն Ֆ.**,Բարոյական կարծիքը Գերմանիայում և փաստերը հրապարակում, Բեռլին, 2000:
[3] **Լեփսիուս Եռ.**, Հաղորդագրություններ Թուրքիայում Հայ ժողովրդի վիճակի մասին, Պոտսդամ, 1916:

պահպանվող «Գերմանա-Արևելյան առաքելության» արխիվում կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնցում ցույց են տրված Եռ. Լեփսիուսի հայանպաստ գործունեության զանազան փաստեր[1]:

Գերմանիայի հանցավոր քաղաքական կուրսը դրսևորվեց առաջին աշխարհամարտի նախօրյակին, մասնավորապես Արևմտյան Հայաստանի ռեֆորմների հարցում և այնուհետև պատերազմի ընթացքում Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրականացման, 20-րդ դարի առաջին ու մեծ ոճրագործության մեղսակցության մեջ: Հարկ է ասել, որ կայզերական Գերմանիան, լինելով սուլթանական Թուրքիայի մերձավոր դաշնակիցը, շարունակեց այդ նույն գիծը նաև երիտթուրքերի կառավարողների հետ: Դա նշանակում էր, որ թուրքական հայատյաց քաղաքականությունն ու գործողությունները լիովին պաշտպանություն էին գտնում պաշտոնական Գերմանիայի կողմից: Եվրոպական բոլոր տերությունների շարքում հայերի ցեղասպանության գլխավոր մեղսակիցը կայզերական Գերմանիան էր: Գերմանական կառավարողների նման դիրքորոշմամբ էլ պայմանավորված էր նրանց վարքագիծը հայերի ցեղասպանության նկատմամբ: Հայերի ցեղասպանության դատապարտմանն ու կայզերական Գերմանիայի մեղսակցությանն է նվիրված Եռ. Լեփսիուսի մեծածավալ աշխատությունը՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918», որտեղ զետեղված է շուրջ 500 դիվանագիտական փաստաթուղթ: Բացի դրանից, մեկ ուրիշ աշխատության մեջ Եռ. Լեփսիուսը, դիմելով կայզերական Գերմանիայի կառավարիչներին, մեղադրելով նրանց հայերի ցեղասպանության մեղսակցության մեջ, հայտարարում էր. «Եթէ դուք մեղաւոր չէք, ապա ապացուցէք, որ մեղաւոր չէք»[2]:1916 թ. հունվարի 27-ին Կառլ Լիբկնեխտը ի լուր աշխարհի հայտարարեց. «Թուրքական կառավարությունը կազմակերպեց հայերի սարսափելի ջարդերը: Ամբողջ աշխարհը գիտի այդ մասին և դրա համար մեղադրում է Գերմանիան, քանզի Կոստանդնուպոլսի կառավարությանը հրամայում էին գերմանական սպաները»: Ցեղասպանության ականատես, գերմանացի հայտնի հրապարակախոս Հարրի Շտյուրմերը իրավացիորեն մեղադրում է գերմանական կառավարությանը այդ հակահումանիստական քաղաքականության մեջ, քանզի այլ կերպ չի կարելի բնութագրել Գերմանիայի գործողությունները հայ

[1] **Kinge G.**, Die armenische Kirche in ihrem Verhaltnis zu den europaischen Kirchen. S. 6-12; „Zum armenischen Bibeljubilaum", S. 8 6 - 8 9 ; P. Fleischmann . Armenisches Kirchentum - DO, 1937, s. 57-60; H. Wizemann. Das heilige Ol der gregorianischen Kirche, S. 38-40; P. F l e i s c h m a n n . Vom armenische Christentum.- OB, 1937, S. 17-18; A. L o e B n e r. Die armenische Kirche in Ostgalizien - DO, 1938, S. 4 5 - 5 1.

[2] Տե՛ս **Լեփսիուս Եռ.**, Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ., Պոտսդամ, 1967:

ժողովրդի նկատմամբ[1]: Սարսափազդու է գրքի այն մասը, որտեղ նկարագրվում է Կոստանդնուպոլսի հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների ոճրագործությունները, որոնց ականատես է եղել Հարրի կինը.

Ակադեմիկոս Ե. Տառլեն, իրավացիորեն դատապարտելով կայզերական Գերմանիայի մեղսակցությունը հայերի ցեղասպանությանը, գրել է «Գերմանացի հյուպատոսները, միսիոներները, զինվորականներն ու քաղաքացիական անձինք դժկամորեն, զուսպ կերպով (չէ՞ որ Թուրքիան կարևոր դաշնակից էր) իրենց կառավարությանը իրազեկ էին պահում պլանաչափորեն իրագործող անլուր և անհամար զանգուածային կոտորածների մասին, սակայն ոչ Վիլհելմը, ոչ Բեթման Հոլվեգը հարկ չէին համարում միջամտելու: Գերմանական իշխանությունների մի խոսքը բավական էր կանգնեցնելու ջարդերի երկու ղեկավարներին՝ Թալեաթ փաշային և Էնվեր փաշային»: Գերմանիայի թուրքամետ, հակահայկական քաղաքականությունը, նրա մեղսակցությունը հայերի ցեղասպանությանը բացահայտ դրսևորվում է նաև վերջին ժամանակներս հայտնաբերված գերմանական արխվային փաստաթղթերում:

1939 թ. օգոստոսի 22-ին Հիտլերը արել է այս արտահայտությունը. «Ես հրամայել եմ... այն մասին, որ պատերազմի նպատակը ոչ թե որոշակի սահմանագծի հասնելն է, այլ հակառակորդի ֆիզիկական բնաջնջումը: Արդ. ես հրահանգել եմ իմ ընտիր մահապարտներին անգութ և անխնայ բնաջնջել լեհական ցեղին ու լեզուին պատկանող տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այդպես մենք կարող ենք նուաճել մեզ անհրաժեշտ կենսատարածքը: Ի վերջոյ, ո՞վ է յիշում այսօր հայերի բնաջնջումը»[2]: Հետազոտողների արդյունքներով ներկայումս Գերմանիայի արխիվներում Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունեն ավելի քան երեք հազար փաստաթուղթ. որոնցից միայն մի մասն է հրապարակվել: Այդ փաստաթղթերի մի մասը ծավալուն ժողովածուով կազմել ու հրապարակել է գերմանացի հայտնի հրապարակախոս, լրագրող, հմուտ հետազոտող Վոլֆգանգ Գուստը: Շուրջ 700 էջանոց այդ ժողովածուն նոր լույս է սփռում Հայոց ցեղասպանության հաստատման, միջազգային ճանաչման ու դատապարտման ասպարեզում: Առանց տարակուսանքի կարելի է ասել, որ այդ ժողովածուն կարևոր

[1] Տե՛ս **Շտյուրմեր Հ.**, Պատերազմական երկու տարի Կոստանդնուպոլսում (փաստագրական հատուկ գիրք, որը գրել է 1915-1916 թվականներին աշխատելով Կոստանդնուպոլսում որպես «Klnische Zeitung»-ի թղթակից), Կ.Պոլիս, 1916:

[2] Արտահայտությունը հայտնաբերվեց գերմանական Բադեն-Բադեն քաղաքի արխիվում. գերմանական արտաքին քաղաքականության փաստաթղթերի ժողովածուում (1937-1945) D սերիայի 7-րդ հատորի 171 էջում:

դեր խաղաց 2005 թ. Հայոց ցեղասպանութեան վերաբերյալ Գերմանիայի Բունդեսթագի կողմից բանաձև ընդունելու գործում: Ցավոք աշխարհի մեծ տերություններից մեկը՝ Գերմանիան, Թուրքիայի ճնշման ներքո, բանաձևում չի օգտագործել ցեղասպանություն-գենոցիդ բառը:

Այդուհանդերձ բանաձևում գրված է. «Բունդեսթագը ցավում է Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության արարքների համար, որոնք հանգեցրել են Անատոլիայի հայերի գրեթե լրիվ բնաջնջմանը: Նա ցավում է նաև գերմանական ռայխի անփառունակ դերի համար, որը, բազմակողմանիորեն իրազեկ լինելով հայերի նկատմամբ կազմակերպված հալածանքների ու բնաջնջման մասին, նույնիսկ չի փորձել կասեցնել ոճրագործությունները» [1]: Փաստորեն, բանաձևում արտացոլված է հայերի ցեղասպանության էությունը: Դրանով Գերմանիան դառնում է աշխարհի 20 պետություններից մեկը, որը, ըստ էության, ճանաչում է Հայոց Ցեղասպանությունը, դատապարտում է թուրքական ցեղասպան պետությանը:

Жанна Арутюнян

СОУЧАСТИЕ ГЕРМАНИИ В ГЕНОЦИДЕ АРМЯН И МИССИЯ ИОГАННЕСА ЛЕПСИУСА

В данной статье впервые полностью освещается последний период всеобъемлющей деятельности организации Иоганнеса Лепсиуса "Германская миссия на востоке", посвященной Армении и армянству. Деятельность эта характеризовалась, с одной стороны, проведением работ, связанных с заботой о сиротах и разными другими спасательными работами в Сирии (Алеппо, Кая Пунар), с другой стороны, осуществляемой широкомасштабной организационной и публицистической деятельностью в Германии, благодаря которой в беспрецедентно тяжелой для благотворительных и миссионерских организаций обстановке стали возможными не только материальная помощь общественности в проведении спасательных работ организации, но и решительная и эффективная борьба против политического подъема националсоциализма - возникающих в те годы многочисленных новых призывов против армянского народа.

[1] Kinge G., s. 6-12; „Zum armenischen Bibeljubilaum", s. 8 6 - 8 9 ; P. Fleischmann, s. 57-60; H. Wizemann, s. 38-40; P. Fleischmann, s. 17-18; A. LoeBner, s. 45 – 51.

Zhanna Harutyunyan

THE COMPLICITY OF GERMANY IN THE ARMENIAN GENOCIDE AND THE JOHANNES LEPSIUS'S MISSION

The universal activity of Johannes Lepsius's organization "German Mission\ in the East" devoted to Armenia and the Armenians is entirely illustrated in the 81 Geschaftsbericht 1942/1943...On the one hand it was characterized by the implemented works regarding the care of orphans and other rescue works accomplished in Syria (Aleppo, Kaya Punar) and on the other hand by the extensive organizational and publicistical activity in Germany, which, at that very difficult for the charitable and missionary associations time, promoted not only the provision of material assistance to the rescue works of the organization, but also to fight decisively and effectively against the political uplifting of national socialism- the coming out defiances against the Armenian people during those years.